ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ե-24

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «27» 01 2022թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս **ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանի** (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտը, ի դեմս **տնօրեն՝ Լիլիթ Ղազանչյանի** (այսուհետ՝ Կազմակերպություն),

(կազմակերպության անվանումը) *(անուն ազգանուն)*

որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), **«Հայ հասարակության փիլիսոփայական,սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)»** ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն

(ծրագրի անվանումը)

պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված 87 762 500 (Ութսուն յոթ միլիոն յոթ հարյուր վաթսուն երկու հազար հինգ հարյուր)

(թվերով և բառերով)

ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի **2.4** կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 87 762 500 (Ութսուն յոթ միլիոն յոթ հարյուր վաթսուն երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար:

(թվերով և բառերով)

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ -ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից

յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա	**ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ ՊՈԱԿ**
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	ք. Երևան, Արամի 44
Հ/հ 900011024115 ՖՆ Գարծառնական վարչություն.	Հ/հ 900018005497 Երևանի թիվ 1 Տեղական Գանձապետական բաժ. ՀՎՀՀ 02508174
Նախագահ՝ Աշոտ Սաղյան	Տնօրեն՝ Լիլիթ Ղազանչյան
_____ *(ստորագրություն)*	_____ *(ստորագրություն)*
Կ. S.	Կ. S.
Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ *(ստորագրություն)*	(Լիլիթ Ղազանչյան) *(անուն ազգանուն)*

Հավելված 1
«27» 01 2022թ.
N 2-24 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Աշոտ Սաղյանը և ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն (ռեկտոր) Լիլիթ Ղազանչյանը վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «27» 01 2022 թ. N 2-24 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 87 762 500 (Ութսուն յոթ միլիոն յոթ հարյուր վաթսուն երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա

Նախագահ՝ Աշոտ Սաղյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

Տնօրեն՝ Լիլիթ Ղազանչյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
«27» 01 2022թ.
N Ա-24 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. **Աշխատանքի կատարման հիմքը՝** Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջե:
2. **Աշխատանքի նպատակը** (1 պարբերություն):

ՀՀ 2022թ. պետբյուջեից բազային ֆինանսավորման համար առաջադրված գիտական ծրագրի հիմնական նպատակն է՝ բազմակողմանի, համակարգված և ամբողջական ուսումնասիրության ենթարկել, ինչպես նաև գիտականորեն հիմնավորված վերլուծությամբ բացահայտել հայ հասարակության պատմական ու արդի հիմնախնդիրները փիլիսոփայական, սոցիալական, քաղաքական ու իրավական համակարգերի զարգացման համատեքստում, ներկայացնելով ծառացած հիմնախնդիրների լուծման ուղղված առաջարկություններ:

3. **Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):**

«Հայ հասարակության փիլիսոփայական,սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» բազային ֆինանսավորմամբ ծրագրում ներկայացված նպատակներն ու խնդիրներն 2022թ.-ին իրականացվելու են Ինստիտուտի գիտության համապատասխան ուղղություններով բարձրակարգ մասնագների, այդ թվում՝ երկու ակադեմիկոսի, մեկ թղթակից անդամի, 16 գիտության դոկտորների, 14 թեկնածուների, ինչպես նաև բազամաթիվ ասպիրանտների, հայցորդների և դոկտորանտների շնորհիվ: Ինստիտուտի գիտաշխատողներն ընգրկված են ներպետական և միջազգային ծրագրերում, ինչպես նաև համագործակցում են ԱՊՀ և Եվրոպական մի շարք երկրների գիտահետազոտական հաստատությունների հետ, յուրաքանչյուր տարի մասնակցում են բազմաթիվ միջազգային և հանրապետական գիտաժողովներին, քննարկումներին, կլոր սեղաններրին: Հատկանշական է, որ ծրագրի լիրաժեք և ամբողջական իրականացմանը նպաստում են *ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային կապերի ամրապնդմամբ և ընդլայնմամբ*: Մասնավորապես, Ինստիտուտը սերտ համագործակցում է ներպետական մի շարք կառույցների, ԲՈՒՀ-րի հետ (այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն, Երևանի պետական համալսարան, Շիրակի պետական համալսարան, Երևանի Վ.Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան, Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարան, Երևանի Հայբուսակ Համալսարան, Եվրասիա միջազգային համալսարան, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան, ՀՀ Սահմանադրական դատարան, ՀՀ Դատախազություն, ՀՀ Քննչական կոմիտե, ՀՀ Փաստաբանական պալատ, ՀՀ Փաստաբանների դպրոց), ինչպես նաև միջազգային և ԵԱՏՄ պետությունների (Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Լեհաստան, Գերմանիա, Ռումինիա, Հունգարիա, ԱՄՆ և այլն) ինստիտուտների գիտահետազոտական հաստատությունների, կենտրոնների

հետ, որոնց հետ կնքվել են մի շարք համաձայնագրեր գիտական կապերի ամրապնդման, համատեղ ուսումնասիրությունների, ասպիրանտական ծրագրերի, մասնագիտական վերապատրաստման, տպագրությունների իրականացման և այլ բնագավառներում համագործակցության վերաբերյալ: Հարկ է նշել, որ Ինստիտուտի նյութատեխնիկական բազան (համակարգչային սարքավորումները, գիտական գրադարանն էլեկտրոնային գրադարանային աղբյուրների հասանելիությամբ, և այլն) նպաստում են անհարժեշտ հետազոտությունների իրականացմանը: Ավելին, նախորդ տարիներին Ինստիտուտին հաջողվել է արտաբյուջետային և գրանտային միջոցներ ներգրավել մի շարք կիրառական սոցիոլոգիական, իրավական և քաղաքագիտական ուսումնասիրություններ իրականացնելու համար:

4. **Աշխատանքի բովանդակությունը** (մինչև 3 էջ):

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում հետազոտություններն իրականացվում են գիտական չորս ուղղություններով՝ փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավունք և քաղաքագիտություն:

Տեսական փիլիսոփայության բնագավառում 2022թ.-ին նախատեսվում է շարունակել շարունակել ուսումնասիրություններ՝ նվիրված արդի տեսական փիլիսոփայության և մեթոդաբանության հայեցակարգերում ազգային ինքնության հիմնահարցի. փիլիսոփայական, իմաստաբանական և նշանագիտական ասպեկտների վերլուծությանը: Լեզվի փիլիսոփայության շրջանակներում իրականացվելու են տեսագործնական հետազոտություններ նվիրված լեզվի և իմաստի կառուցվածքային և գործառութային դրսևորումներին տարբեր խոսույթներում՝ քաղաքական և սոցիալական հաղորդակցման ոլորտներում: Ուսումնասիրությունների շրջանակներում բացահայտվելու է «ազգային ինքնություն» հասկացությունը, որպես տարատեսակ գործոնների ինքնազարգացող համակարգ: Արվեստի տեսության և գեղագիտության շրջանակներում իրականացվելու են գլոբալացման պայմաններում մշակույթային՝ ի դեմս գեղարվեստական արժեքների իբրև ազգային անվտանգության նշանակալի գործոն յուրահատկությունների բացահայտմանն ուղղված աշխատանքներ: Կատարված հետազոտությունները հանրությանը ներկայացվելու են հեղինակավոր գիտական պարբերականներում տպագրված հոդվածների տեսքով:

<u>Հայ փիլիսոփայության պատմության</u> բնագավառում շարունակվելու են համապարփակ գիտահետազոտական և վերլուծական աշխատանքներ նվիրված միջնադարյան, ինչպես նաև XIX-XX դարի արևմտահայ փիլիսոփայության պատմության հիմնախնդիրների բացահայտմանն ու վերլուծությանը: 2022թ.-ին բաժնի աշխատակիցների ուշադրության կիզակետում են լինելու Պետրոս Արագոնացու, Շահամիր Շահամիրյանի, Մխիթար Սեբաստացու, Ռուբեն Տեր-Մինասյանի և այլ մեծանուն հայ գործիչների պատմափիլիսոփայական, փիլիսոփայա-քաղաքական հայեցակարգերը՝ մարդու իրավունքների և ազատությունների, ազգային մշակութային ինքնության, ազգային սահմանադրականության ակունքների, սահմանադրական կառավարման խորհրդարանական ձևաչափի, քաղաքացիական հասարակության ձևավորման, կրթության ու դաստիարակության համակարգի բարեփոխման, ազգային անվտանգության քաղաքականության հիմնասկզբունքների և այլ հարցերի վերաբերյալ:

Սոցիալական փիլիսոփայության բնագավառում 2022թ.-ին իրականացվելու են հետազոտություններ նվիրված ՀՀ-ում տիրող մի շարք սոցիալ-փիլիսոփայական հիմնախնդիրների՝ այդ թվում համաշխարհայնացման համատեքստում հայապահպանության և ժողովրդավարական սկզբունքների փոխհարաբերության առանձնահատկությունների բացահայտմանը: Ավելին, ներկայացվելու են այդ փոխհարաբերություններին նպաստող և խոչընդոտող սոցիալական և աշխարհայացքային գործոնները:

Սոցիոլոգիայի բնագավառում 2022թ. իրականացվելու են սոցիոլոգիական հետազոտություններ՝ նվիրված երկրում տիրող սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական ու քաղաքական իրավիճակին, ինչպես նաև միգրացիոն գործընթացների սոցիալ-տնտեսական ազդեցության և մոտ ապագայում հնարավոր հայրենադարձության հոսքերի ծավալների, ներուժի, սոցիալական կառուցվածքի և դրանց նպաստող պայմանների վերլուծությանը: Այսպես,. բաժնի աշխատակիցները «Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի» հետ համատեղ նախատեսում են արտաբյուջետային միջոցներով իրականացնել ներկայացուցչական սոցիոլոգիական ուսումնասիրություն՝ նվիրված հանրապետությունում ընթացող կարևոր քաղաքական գործընթացների ու զանգվածային սոցիալական տրամադրությունների վերլուծությանը, որի շրջանակներում սոցիոլոգիական հարցումների միջոցով խորքային ուսումնասիրության կենթարկեն երկրում տիրող սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական ու քաղաքական գործընթացները, ինչպես նաև վերլուծվելու է հանրապետության բնակչության վերաբերմունքը կարևորագույն քաղաքական որոշումների նկատմամբ: Կատարվելիք գիտական ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվելու են գիտական ու վերլուծական կենտրոններին, հասարակական կազմակերպություններին, ինչպես նաև արտացոլվելու են մեկ կոլեկտիվ մենագրությունում և մի շարք գիտական հոդվածներում՝ այդ թվում արտասահմանյան հեղինակավոր հանդեսներում:

<u>Քաղաքագիտական ուսումնասիրությունների</u> բնագավառում իրականացվելու են հետազոտություններ նվիրված հայ-ադրբեջանական պատերազմի արդյունքով տարածաշրջանում ձևավորվող գեոստրատեգիական նոր իրողություններին, Հարավ Կովկասյան պետություններում կոնսոցիատիվ ժողովրդավարության ներդրման հնարավորություններին և ՀՀ-ն քաղաքական արդիականացմանը: Մասնավորապես, ԱՄՆ նախագահական ընտրություններում դեմոկրատների հաղթանակը արմատական տեղաշարժեր է առաջացնում, Թուրքիայի պանթյուրքիստական քաղաքականության առաջադրմամբ, Այսրկովկաս -Միջին Ասիա գեոստրատեգիական տարածքում: Հարկ է նշել, որ ազգային շահի հստակեցումը և նորովի մեկնաբանությունը հայ-ադրբեջանական պատերազմի լույսի ներքո ստանում է առավել արդիական և հրատապ նշանակություն: Միևնույն ժամանակ, քաղաքացիական հասարակությունը, քաղաքական մշակույթի դրսևորման հիմնախնդիրները շարունակելու են մնալ ուսումնասիրության լույսի ներքո:

<u>Պետաիրավական ուսումնասիրությունների</u> բնագավառում 2022թ.-ին նախատեսվում է շարունակել բազմակողմանի, համապարփակ գիտահետազոտական և գիտագործնական ուսումնասիրությունները նվիրված ՀՀ-ում պետական կառավարման պառլամենտական ձևի հաստատմանը, ընթացող սահմանադրաիրավական և դատաիրավական բարեփոխումներին (այդ թվում՝ անկախ դատական իշխանության,

անցումային արդարադատության հաստատմանը), պետական և օրենսդրական համակարգերի կատարելագործմանը, ինչպես նաև պետության հայեցողության սահմանների հստակեցմանը, վերջիններիս առանձնահատկությունների վերլուծության և համալրման անհրաժեշտությունից բխող տեսական և կիրառական ուսումնասիրություններին: Մասնավորապես, բաժնի աշխատակիցները իրականացնելու են նոր հետազոտություններ նվիրված արդի սահմանադրական իրավունքի առանցքային հիմնախնդիրներին, շեշտադրելով են անձի իրավական դրության առանձնահատկություններից բխող պետություն-անհատ փոխհարաբերությունները, անձի իրավունքների և պարտականությունների սահմանադրահիրավական երաշխիքների ամրագրման և զարգացման ինչպես տեսական, այնպես էլ գործնական հիմնախնդիրների բացահայտումը: Ավելին, բաժնի աշխատակիցների ուսումնասիրություններ կենտրոնում շարունակելու են մնալ իշխանությունների տարանջատման սկզբունքի կիրառման կատարելագործումը, մասնավորապես՝ օրենսդիր և գործադիր իշխանության փոխհարաբերության հիմնախնդիրների հաղթահարումը: Ավելին, 2022թ.-ին իրականացվելու են տասական և կիրառական նշանակության աշխատանքներ նվիրված հայ-ադրբեջանական պատերազմի հետևանքների հաղթահարման իրավական ուղիներին: 2022թ. նախատեսվում է շարունակել ուսումնասիրություններ նվիրված հայ իրավունքի աղբյուրների, արդի պետության և իրավունքի տեսության և պատմության, ինչպես նաև քրեական իրավունքի հիմնախնդիրներին (իրավունքի էությունն և արժեքաբանությանը, զինվորական և պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների առանձնահատկությունները, և այլն): Վերոնշյալ բոլոր հիմնախնդիրների համապարփակ ուսումնասիրությունն ու ստացված գիտագործնական արդյունքները նպաստելու են ՀՀ-ում իրական պառլամենտական կառավարման համակարգի հաստատմանը, անձի սահմանադրական կարգավիճակի, ժողովրդավարական սկզբունքների արդյունավետ իրացմանը, ԵԱՏՄ երկրների հետ փոխհարաբերությունների հստակեցմանը, ինչպես նաև հետպատերազմյան ժամանակաշրջանում հայ հասարակության առջև ծառացած խնդիրների լուծմանը: Հարկ է նշել, որ 2022թ.-ին Ինստիտուտի իրավագետները, ՀՀ Փաստաբանական դպրոցի հետ համատեղ նախատեսում են շարունակել **կիրառական հետազոտություններ**՝ նվիրված սահմանադրահիրավական բարեփոխումներին, կառավարման խորհրդարանական ձևին անցմանը: Ավելին, Ինստիտուտի իրավագետները տրամադրելու են անվճար իրավաբանական խորհրդատվություններ հայ-ադրբեջանական պատերազմից տուժած անձանց, ինչպես նաև ներպետական մի շարք կառույցներին իրավական խնդիրների վերաբերյալ (ղեկ՝ իր.գիտ.թեկ. Լ. Ղազանչյան): Կատարված հետազոտության արդյունքները ներկայացվելու շահագրգիռ անձանց՝ պետական և մասնավոր կառույցներին, ինչպես նաև արտացոլվելու են ինչպես ներպետական, այնպես էլ արտասահմանյան հեղինակավոր գիտական ամսագրերում:

5. **Ակնկալվող արդյունքները.**

2022թ.-ին «Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» բազային ֆինանսավորմամբ ծրագրի իրականացմամբ ստացված արդյունքները ներկայավելու են մենագրությունների, ժողովածուների, ուսումնական ձեռնարկների, ինչպես նաև ներպետական և արտասահմանյան բազմաթիվ հեղինակավոր գիտական ամսագրերում

(այդ թվում՝Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում) գիտական հոդվածների տեսքով: Ավելին, իրականացվելու է գիտաուսումնական գործունեություն ասպիրանտների և դոկտորանտների պատրաստման ուղղությամբ: Նախատեսվում է կազմակերպել ինչպես հանրապետական, այնպես էլ միջազգային գիտաժողովներ, կլոր սեղան-քննարկումներ, մասնակցել միջազգային և ներպետական գիտական ծրագրերին ու միջոցառումներին, ներկայացնել գիտամատչելի հրապարակումներ թերթերում, ամսագրերում և հեռուստատեսությամբ:

Կազմակերպության
տնօրեն՝ _____ (Լիլիթ Ղազանչյան_)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Լիլիթ Ղազանչյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված 3
«27» 01 2022 թ.
N 2-24 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» ծրագրի
(ծրագրի անվանումը)

հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները (այդ թվում՝ Հավելված N 2-ի 5-րդ կետում նշված ակնկալվող արդյունքները)	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
	Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրները (պատմություն և արդիականություն)	Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության, իրավական պետության, արդի սոցիալական և քաղաքական ինստիտուտների կայացման և զարգացման գործընթացների փիլիսոփայական, սոցիալ-իրավական, քաղաքական և իրավագիտական հիմնախնդրիների հետազոտությունը և վերլուծությունը, հայ ժողովրդի պատմա-մշակութային և հոգևոր ժառանգության ուսումնասիրությունը:	-Գիտատեսական և գիտագործնական վերլուծությունների իրականացում: -Կիրառական հետազոտությունների իրականացում: -Գիտաժողովների, կլոր սեղանների, քննարկումների կազմակերպում: -Գիտաուսումնական գործունեություն, երիտասարդ գիտական կադրերի պատրաստում: -Իրավական տարաբնույթ փաստաթղթերի, օրենքների, օրինագծերի և պաշտոնական որոշումների ու դրանց նախագծերի գիտական փորձաքննության իրականացում, իրավաբանական խորհրդատվության տրամադրում:	- Գիտական մենագրությունների, ժողովածուների, ուսումնական ձեռնարկների տպագրություն: Գիտական հոդվածների հրապարակում ներպետական և արտասահմանյան հեղինակավոր գիտական ամսագրերում (այդ թվում՝Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում): -Գիտամատչելի հրապարակումներ թերթերում, ամսագրերում և հեռուստատեսությամբ: -Հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպում, ինչպես նաև մասնակցություն, միջազգային գիտական միջոցառումներին և ծրագրերին: -Գիտաուսումնական, գիտամանկավարժական, գործունեության իրականացում, գիտական կադրերի պատրաստում, այդ թվում՝ ասպիրանտների և դոկտորանտների պատրաստում:	I եռամսյակ II եռամսյակ III եռամսյակ IV եռամսյակ	17 552, 500 21 940,625 21 940,625 26 328,750
Ընդամենը						87 762,500

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Լիլիթ Ղազանչյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Լիլիթ Ղազանչյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

---

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով*

Հավելված N 4
«27» 01 2022թ.
N 16-24 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայ հասարակության փիլիսոփայական,սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ(պատմություն և արդիականություն) ծրագրի

(ծրագրի անվանումը)

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	*82108,,9*	*16421,8*	*20527,2*	*20527,2*	*24632,7*
2	տնտեսական և այլ ծախսեր*	*5653,6*	*1130,7*	*1413,4*	*1413,4*	*1696,0*
ԸՆԴԱՄԵՆԸ		87 762,5	17552,5	21940,6	21940,6	26328,7

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Լիլիթ Ղազանչյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (Նարինե Մուրադյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը*

Հավելված 4.1
«27» 01 2022թ.
N 4-24 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ †

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	2303,6
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*700*
	գազի ծառայություն	*800*
	ջրամատակարարման ծառայություն	*50*
	կապի ծառայություն	*700*
	աղբահանություն	*53,6*
2	Գույք	500
3	Սարքեր և սարքավորումներ	700
4	Նյութեր	1000
5	Գործուղումներ	0
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	0
7	Արշավախմբեր	0
8	Հրատարակման ծախսեր	950
9	Վառելիք մեքենայի	200,0
Ընդամենը		5653,6

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Լիլիթ Ղազանչյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (Նարինե Մուրադյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կ.Տ.

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում*